լով զայն։ Այլ առաջակայք[1]) քաղաքիս ասացին. Տացես մեր եկեղեցեացս Ճ–ական զուռուչ և գնացեալ առցես. և նա զտալն յանձն էառ հանդերձ ձեռագրաւ, բայց և կրկին չարքն զայն խափանեցին և ոչ տվին կամս՝ սահմանեալ զաղմուկն, բայց նա ի լուռ լեալ գնաց եհան հրաման ի թագաւորէն որպէս օրէն էր, և գնացեալ անդ ի Կիլիկիա. Աստուած առաջնորդեսցէ։

Կիրակի (17 Մայիս). Սուրբ Հոգոյ գալուստ։ Ի կղզին Ներսէսի գնացաք երկրպագանել զսուրբ տեղիսն հանդերձ փառն արամբք, և ընդ այլ կղզիսն շուրջ եկեալ մեր, ապա նստեալ ի նաւ յԸ–երորդ ժամուն, ոչ հասաք ժամանել զբան քաղաքին որ ասի Դուռ Աւազոյ, զի փակեալ էր, քանզի էանց զերրորդ ժամ գիշերոյն, և ելեալ յեզրս ծովուն՝ անդ օթեցաք զայն գիշեր ի տունս քրիստոնէից ոմանց ծանօթից մեր։

Բշիս օրս (18 Մայիս) զթուղ թագաւորին հանեալ տարան ի տեղին յայն որ ասի ըստ բառին իւրեանց չայիր, ի մէջ քաղաքիս ի կողմն արևմտեան, անդ եդեալ, որպէս զի զօրքն ամենայն անդ հաւաքեալ՝ պատրաստեսցեն զիւրեանս ի պատերազմն երթալ[2]). և երթային յամենայն կողմանց քաղաքիս ծառայքն ամենայն և անդ օթէին՝ զձիս և զջորիս ընդ իւրեանս բարձեալ։

Եշի օրս (21 Մայիս) վէզիրն կրկին ի վերայ ուրուֆէթից քիւրէկճի արկ։

Կիրակի առաւօտուս ԻԴ–իս գնացաք ի թամաշա վասն բանակի պատերազմին եւ ամենայն քաղաքս գումարեալ նստան մի ի վերայ միոյ յանցս ճանապարհին ի խանութս և ի փողոցս յԲ կողմանց, և գնացեալ նոքա յառաւօտէ, գունդ գունդ եղեալ ամենայն

1) առաջակալը. 2) երթեալ.